ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/125

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 03.06.2020թ. թիվ 26/26-1/8177-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 27.05.2020թ. թիվ 02/16.4/3695-2020 գրության հիման վրա, 03.06.2020թ. թիվ 26/26-1/8177-2020 գրությամբ նախաձեռնել է «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/125 ընթացակարգի շրջանակներում 19.06.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.05.2020թ. թիվ 02/16.4/3695-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև՝ վերջինիս կողմից ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովման բանկային երաշխիքների առկայությամբ, 2020 թվականի ապրիլի 30-ին կնքվել է Մոդուլային տիպի, պողպատե կոնստրուկտիվ համակարգով սպանդանոցների շենքերի կառուցման (բազմակի կիրառման) օրինակելի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/11» գնման պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Ընկերության կողմից ներկայացված 2020 թվականի ապրիլի 27-ի No O.AB.100.12CIB.PIED.2.4311.20 և O.AB.100.12CIB.PIED.2.4312.20 համարներով բանկային երաշխիքների իսկության ստուգման վերաբերյալ հարցում է ուղարկվել «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերություն և ստացվել է պատասխան, որ նման բանկային երաշխիքներ բանկի կողմից չեն թողարկվել:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշվածը, պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը, պայմանագրի 7.3-րդ կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 33-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջը (այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) ապա այդ հիմքն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար) վերը նշված կազմակերպության հետ կնքված պայմանագիրը 2020 թվականի մայիսի 27-ից միակողմանի լուծել է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ համաձայն Կարգի 45-րդ կետի՝ կից ներկայացնում է Ընկերության տվյալները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/125 ընթացակարգի շրջանակներում 19.06.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/125 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 30.04.2020 թվականին կնքվել է N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/11» պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր:

2. «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են 27.04.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.2.4311.20 և O.AB.100.12CIB.PIED.2.4312.20 համարներով բանկային երաշխիքներ:

3. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն 23.05.2020թ. G.Mirzoyan@ameriabank.am էլեկտրոնային փոստի հասցեից ՀՀ քաղաքաշինության կոմիտեի infominurban.am էլեկտրոնային փոստի հասցեով ուղղված գրությամբ հայտնել է, որ թիվ O.AB.100.12CIB.PIED.2.4311.20 և O.AB.100.12CIB.PIED.2.4312.20 համարներով բանկային երաշխիքներ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից չեն թողարկվել:

4. ՀՀ քաղաքաշինության կոմիտեն Ընկերությանն ուղղված 27.05.2020թ. ծանուցմամբ հայտնել է, որ Ընկերության կողմից ներկայացված 2020 թվականի ապրիլի 27-ի No O.AB.100.12CIB.PIED.2.4311.20 և O.AB.100.12CIB.PIED.2.4312.20 բանկային երաշխիքների իսկության ստուգման վերաբերյալ հարցում է ուղարկվել «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերություն և ստացվել է պատասխան, որ նման բանկային երաշխիքներ բանկի կողմից չեն թողարկվել:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշվածը, պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացությունը, պայմանագրի 7.3-րդ կետը և Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջը (այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) ապա այդ հիմքն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար) վերը նշված կազմակերպության հետ կնքված պայմանագիրը միակողմանի լուծել է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը կտեղադրվի gnumner.am կայքում և կուղարկվի պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության՝ 03.06.2020թ. թիվ 26/26-1/8177-2020 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ 27.05.2020թ. թիվ 02/16.4/3695-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:*** Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին***:

Նույն պարբերության համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝ գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը կամ գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի կատարման տեխնիկական հսկողության ծառայությունը, ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով: Ընդ որում ապահովման գործողության ժամկետը չպետք է պակաս լինի կնքվելիք պայմանագրով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման

վերջնաժամկետից, ներառյալ՝ պայմանագրի կատարման արդյունքի ընդունման համար սահմանված ժամկետը, և ներկայացվում է օրենքի 35-րդ կետով սահմանված կարգով:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպիսով՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի միջև 30.04.2020 թվականին կնքվել է N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/11» պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը:

«Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ի կողմից «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել են 27.04.2020թ. թիվ O.AB.100.12CIB.PIED.2.4311.20 և O.AB.100.12CIB.PIED.2.4312.20 համարներով բանկային երաշխիքներ:

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն 23.05.2020թ. G.Mirzoyan@ameriabank.am էլեկտրոնային փոստի հասցեից ՀՀ քաղաքաշինության կոմիտեի infominurban.am էլեկտրոնային փոստի հասցեով ուղղված գրությամբ հայտնել է, որ թիվ O.AB.100.12CIB.PIED.2.4311.20 և O.AB.100.12CIB.PIED.2.4312.20 համարներով բանկային երաշխիքներ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից չեն թողարկվել, այսինքն սույն գործով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օր հանդիսանում է 23.05.2020թ.:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, հիմք ընդունելով 23.05.2020թ. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկությամբ պարզ դարձած այն հանգամանքը, որ Ընթացակարգի շրջանակներում ներկայացված No O.AB.100.12CIB.PIED.2.4311.20 և O.AB.100.12CIB.PIED.2.4312.20 համարներով բանկային երաշխիքներն ըստ էության կեղծվել են, Ընկերությանն ուղղված 27.05.2020թ. ծանուցմամբ Պայմանագիրը միակողմանի լուծել է և Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակել www.procurement.am հասցեով գործող գնումների պաշտոնական տեղեկագրում:

Այսպիսով՝ Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը սահմանում է, որ ***այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ***

հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Հաշվի առնելով վերոնշյալ իրավակարգավորումները՝ արձանագրում եմ, որ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ն, ներկայացնելով համապատասխան բանկի կողմից չթողարկված բանկային երաշխիքներ, թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ 30.04.2020 թվականին կնքված N «ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/11» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելուն, ուստի գտնում եմ, որ առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 03.06.2020թ. թիվ 26/26-1/8177-2020 գրությամբ «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էտալոն Գրուպ» ՓԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**